

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԱՆՈՆ ՈՌԿԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՌՈՐԱՑ

Մեր բազմահարուստ պատմական նիւթերի մէջ գտանք մի ձեռագիր, ութն թերթից բաղկացած, տեսո՞ւ կապուտ հաստ թղթի վրայ գրած այն գըշութեամբ, որ անկասկած վերաբերում է դարուս առաջին քառորդին։ Դորա վերնագիրն է «Կանոն կարգադրութեանց ժողովոյ ոսկերիչ արհեստաւորաց, հոգացեալ ի պէտս յաւերժական խաղաղութեան, և միաբանական սիրոլ»։ Այդ կանոնները ՅԵ յօդուածից են բաղկացած։

Աչքի առաջ ունենալով, որ մեր համքարութեանց անցեալի մասին շատ քիչ տեղեկութիւններ կան մեր գրականութեան մէջ և համոզուած լինելով, որ սորա հրատարակութեամբ բաւական նիւթ տուած պիտի լինինք համքարութեան պատմութեան ուսումնասիրութեամբ պարապողներին՝ մենք զետեղում ենք այստեղ այդ կանոնները՝ գրաբարից աշխարհաբարի վերածելով նոցա։

Ա.

Ա. ՅԵՆԻց առաջ այս ժողովի համար արժան է ընտրել չորս գլխաւոր կառավարիչ՝ հանճարեղ և Աստուածապաշտութեան հոգւով լցուած մարդիկ։ Նոցանից մէկը կկոչուի Արհեստապետ (ուստաբաշխ), իսկ երեքը նորախորհրդականները կլինին, և այս չորսի գործը կլինի մի տարի ժամանակով հսկել բոլոր ոսկերիչների դատաստանի և բարեկարգութեան վերայ. և եթէ սոքա բարի գտնուին՝ կմնան այնքան ժամանակ, ինչքան որ ժողովի մեծամասնութեան հաճելի կլինի, ուղիղ դատաստանով և մէկմէկու անկեղծ հաւատարմութեամբ և ոչ թէ կողմնապահութեամբ։

Նարկ չկալ, որ սոքա հասակով ծեր լինին և կամ արհեստով գերազանց և կամ հարուստներ, այլ այն է հարկաւոր, որ քրիստոնէական խղճի և հանճարեղ մտքի տէր լինին, բնութեամբ արդարադատ և բարքով առանց ագահութեան։ Որովհետև թէ Աստուած և թէ մարդ՝ աշխարհն և ժողով կառավարելու համար ալդպի-սի մարդ են պահանջում։

Ընտրութեան ձեւն ալսպէս է լինում. ընդհանուր ժողովը միաբանութեամբ առաջ 12 մարդ է ընտրում, և այս 12-ը ընտրում են 4 կառավարիչներին, այս չորսն էլ ընտրում են իրանց համար գրագիր, սպասաւոր և քա-հանալ։

Բ.

Արհեստապետի և նորա երեք կառավարիչների ու խորհրդակիցների ընտրութեան ժամանակ նախ՝ քահա-նալի ներկայութեամբ Խաչի ու Աւետարանի վերայ երդ-ւում են հաւատարիմ հայր լինելու ամբողջ ժողովին և յետոյ հաստատում են իրանց իշխանութեան մէջ։

Երդման ծեւը

Ա. Խաչն ու Աւետարանը դնում են մաքուր պաս-տառով ծածկած մի մաքուր սեղանի վերայ, և քահա-նան շուրջառով ու փորուրարով կանգնում է սրբու-թիւնների մօտ և չորս ընտրուածներն էլ ս. Խաչի ու Աւետարանի առաջ, աջ ձեռքերը վեր բարձրացրած։ Եւ քահանան վերցնելով երդմնագիրը՝ նոցա կողմից կար-դում է և նոքա քահանալի հետ ասում են հետևեալը։

Մենք, չորսս, որ ընտրուած ենք մեր եղբարյա-կիցների ժողովից, Ամենատես Աստուծոյ առաջ ս. Խա-չիս ու Աւետարանիս վկայութեամբ, երդւում ենք հո-գու և մտքի ամենալին ուղղութեամբ և ճշմարտու-թեամբ, որ ինչքան ժամանակ կառավարիչ կլինինք ոս-կերիչների ժողովին, կլինինք հաւատարիմ մեր ամեն գործառնութեան մէջ թէ դատ վարելում, թէ վկայե-լում, և թէ ճշմարիտ հաւատարատեսութեան մէջ, ա-մենքի համար թէ մեծի և թէ փոքրի, առանց ագա-

հութեան, առանց կողմնապահութեան, առանց նա-
խանձի և ատելութեան, առանց բարեկամութեան և չա-
րակամութեան, և այս մեր ուխտիւ պալմանիս թող
վկայ լինի նախ Աստուած և յետոյ ս. Խաչս ու Աւե-
տարանս:

Եւ կհամբուրեն Աւետարանն ու Խաչը, ժողովը
կփակուի և քահանային վարձատրելով՝ ճանապարհ
կդնեն: Սորանից յետոյ մեծերը համբուրում են ընտ-
րեալների բերանը, իսկ փոքրերը՝ ձեռներն ու շնորհա-
ւորելով նոցա իշխանութիւնը՝ ցրում են:

Պ.

Ընդհանուր ժողովը պարտաւոր է ճանաչել իւրեանց
Արհեստապետին և միւս երեք խորհրդականներին, ինչ-
պէս գլխաւոր և կառավարիչներ իրանց արհեստի
վերաբերեալ, պարտաւորուում են անսալ և հնա-
զանդել նոցա բոլոր օրինաւոր հրամաններին, մեծ պա-
տուով ակնածել նորանից ինչպէս որդիք իրանց հայ-
րերից: Նոյնպէս էլ նոքա՝ ըստ կանխագոյն երդման
պէտք է ամենայն հաւատարմութեամբ կառավարեն և
պաշտպանեն նոցա իրաւունքը, ամենայն իրաւամբ և
արդարութեամբ. և գիւղար գէպքերում պարտաւոր-
ւում են ընտրել ժողովից խոհեմ և արդարադատ մար-
դիկ որքան էլ հարկաւոր լինի և նոցա հետ վճռել
երկու բողոքաւորների գործերը:

Պ.

Այս պատուելի ժողովի չորս կառավարիչները պիտի
ունենան մի պատրաստական սպասաւոր՝ այս ու այնտեղ
ուղարկելու կարևոր գործի համար, որին հները իգիդ-
քաշի էին անուանում: Եւ այս սպասաւորը ազատ կլինի
ամեն տեսակ հարկից և սորան էլ կառավարիչների պէտ
կփոխեն, եթէ որևէ անհաւատարմութիւն տեսնեն նո-
րանում, կամ չափազանց արքեցութիւն, կամ կռուասի
ըութիւն կամ գողութիւն և կամ եթէ վատ բերան ու-
նենայ ու կռուացնող:

Ե.

Թէ չորս կառավարիչների և թէ բոլոր ժողովից ա-

ուաջին գործն այն է, որ մի աշակերտ մինչև որ բաւական հասու չլինի արհեստին, հրամանահաց չստանալ. և մինչև որ չորս գլխաւորների վկալութեամբ և ժողովի բանագէտների հաւանութեամբ յալտնի չլինի նորա հմտութիւնն արհեստի մէջ՝ չպիտի ձեռնադրուի ինքնադլուխ արհեստաւոր:

Զ.

Աշակերտը երբ ցանկանալ ոսկերչի մօտ մտնել, պէտք է չորս գլխաւոր կառավարիչների գիտութեամբ և վերահասութեամբ լինի և առանց սոցա թղթի չպէտք է ընդունուի, աշակերտի դաշանց թուղթը գրելու է ոսկերիչների գրագիրը և ոչ ուրիշ մէկը և ինքը գրագիրն էլ պէտք է ստորագրէ վկալութիւնը: Խոկ դաշնագրութեան թուղթը դէրբովոյի պէտք է լինի և ոչ հասարակ աւելի հաստատութեան համար և տէրութեան գանձարանին շահ:

Է.

Հրամանահացի (դաստուրահացի), նոյնպէս և ինքնագլուխ վարպետ օրհնելու համար դրամ միապէս չըպէտք է պահանջուի, այլ կարողութեան համեմատ, որովհետև թէպէտ կան ոմանք, որոնք արհեստով գերազանց են, բայց չունեոր են, և կան ոմանք, որոնք արհեստի գիտութիւնով առաւել են, բայց արհեստը աւելի քիչ իմացողի արդիւնքը նորա արդիւնքից աւելի է, և այս առաջ է եկած կամ նոցա անմիութիւնից, կամ ծուլութիւնից և կամ ուրիշ պատճառից, ինչպէս և ամենքին յալտնի է: Աւելացրած են այս խօսքերը: «Հաւասար թող լինի»

Յ.

Մի աշակերտ, որ մանում է մի վարպետի մօտ ոսկերչութեան աշակերտ, վերը լիշած օրինագրութեան համեմատ, պէտք է մնալ նորա մօտ մինչև վարպետ օրհնուիլը: Եւ ուրիշ վարպետ երբէք չէ կարող իշխել և համարձակուիլ հանել նորան իւր վարպետից, նոյն պէս էլ աշակերտը և աշակերտի տէրը ալդպէս պիտի

վարուին։ Խոկ եթէ աշակերտն ու աշակերտի տէրը ու-
րիշ բանաւոր պատճառ ունին այն վարպետից դուրս
գալու և հանելու, պարտական են պատճառը վերոյի-
շեալ չորս գլխաւոր խորհրդականներին յայտնել և նոքա
պատճառը քննելով կվճռեն թէ որինն է իրաւունքը
վարպետի ու աշակերտի մէջ, և այն ժամանակ կտան
ճշմարիտ բաւականութիւն, առանց տարածայնութիւն-
ները հռչակելու, ալ անխռով խաղաղութիւնով ու հան-
դարտութիւնով։

Թ.

Եթէ հրամանահաց տուած մի աշակերտ բանաւոր
և իրաւացի պատճառով և չորս կառավարիչների վե-
րահասութեամբ դուրս՝ գալով՝ ցանկանալ վարձու մըտ-
նել մի ուրիշ վարպետի մօտ, պէտքէ դարձեալ ալդ
չորսի խորհրդով ու հրամանով լինի և նորան ընդու-
նող վարպետը գրաւոր հաստատութիւնով պիտի պար-
տաւորուի հասարակութեան գանձարանին հատուցանել
մի քեզ դրամ, իւր կարողութեան համեմատ, ինչքան
որ արժան կհամարեն չորս կառավարիչները, և նորա
կէսը տալու է վարձուորը (քեարգահը) յօդուտ հասա-
րակութեան։

Ժ.

Երբ աշակերտները վարպետ օրհնուին, նոյն օրը
պիտի տալ և աշակերտի հրամանահացը (դաստուրա-
հաց), որովհետև ալդ օրն է պատշաճաւորը։

ԺԱ.

Վարպետ օրհնելու կամ հրամանահացի վարձը չը
պէտք է անարդ լինի և յետնեալ, օրինակ «եռդնա»
կամ հինգ ապասի, ալ իւրաքանչիւրի կարողութեան
համեմատ, որովհետև մեծ անպատճութիւն է այս ազ-
նիւ արուեստի անուան, ինչպէս և արուեստաւորի հա-
մար, որ ամեն ծառայական արհեստների թագաւորը
լինելով՝ ալդպիսի անարդ և յետնեալ նուէրներով վար-
պետ ձեռնարդուի նուիրեալը։ և սա կախուած կլինի

չորս վերապատուեալ կառավարիչների քրիստոնէական խղճմտանքից, ինչքանի էլ արժանաւոր կդատեն նուիրեալ աշակերտին:

(Այս յօդուածի լուսանցքում աւելացրած է հետեւեալ ծանօթութիւնը. «այս գլուխն փոխեցաւ թուրք աշկերտ օրհնելու»):

ԺԲ.

Ամեն մի վարպետ պարտաւոր է իւր աշակերտին վարժեցնել նախ ծաղկարարութեան, կարակնի (կարկինի) և քանոնի, այսինքն վարդալի և լիլինկալի գործածութեան մէջ, նաև չափերի և ձեերի ճանաչողութեան մէջ, որ առանց սոցա ոչ մի արհեստ չի կարելի սովորել բնաւ կամ իւր ձեռքով և կամ եթէ ինքը բաւական չէ, ուրիշների ձեռքով: Եւ ամեն վարպետ թէպէտ աշակերտի տէրը չէ, սակայն պարտաւոր է առանց խնայելու օրինակ տալ նորան, և այն՝ նախ իփառս Աստուծոյ, երկրորդ՝ ի պատիւ բանական մարդկութեան, երրորդ՝ ի պատիւ ազգին և չորրորդ՝ ի պատիւ փառաւոր ժողովի, չուզենալով, որ ժողովում մի ապաշնորհ վարպետ գտնուի: Աշակերտն էլ վերահասու պէտք է լինի՝ փորագրութեան և չօքուրթմալի և չիւթիշին: Եւ եթէ մի աշակերտ քիչ կամ շատ վերահասու չէ վերը լիշածներին, չը պիտի օրհնուի: Նախապատուած չորս անձինք պարտաւոր են հսկել այս բանի վերալ և լորդորել աշակերտի վարպետին և եթէ տեսնեն որ նազանցառու է լինում, պէտք է լանգիմանեն նորան և զգուշացնեն: Դոկ եթէ վարպետը լանգինելով չլսէ չորսին և աշակերտին ցանկանայ ապաշնորհ թողնել, չորսը պարտաւոր են ալդ աշակերտին (որ ժողովի որդին է ու զաւակը) հանել վարպետից և տալ ուրիշ վարպետին, ժողովի անուան օգտի ու փառաւորութեան համար:

(Վերջը նետեւեալ համարում)

Գ. ա. բ. Ա.